ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Թումանյան **11/22/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ.

Բացակա էին՝
<<Հանրապետություն>> խմբակցության անդամ՝ Նիկալ Դալլաքյանը.

<<Քաղաքացիական պայմանագիր >> խմբակցության անդամներ՝ Սեդրակ Գալստյանը, Սվետլանա Եգանյանը, Հրանուշ Վանյանը.

Նիստին մասնակցում էին՝
Վարչական ղեկավարները, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները և բնակիչներ.

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Սուրեն Թումանյանը
Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռուզաննա Շահվերդյանը

Նիստի անցկացման վայրը՝ Ահնիձորի ակումբի շենք

Լսեցին
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Թումանյան համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը.
1) ՀՀ Լոռու մարզի Թումանյանհամայնքիավագանու 2024թ. նոյեմբերի 22-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին
2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքում 2025 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին
3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ղեկավարի վարձատրության չափը հաստատելու մասին
4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի

աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
6) Թումանյան համայնքի սեփականության 2024 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին
7) Թումանյան համայնքի Քարինջ գյուղի 06-110-0001-0001 ծածկագրի 0.22252 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին
8) Թումանյան համայնքի Քարինջ գյուղի 06-110-0001-0002 ծածկագրի 0.26644 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին
9) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Դսեղ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-035-0907-0003 ծածկագրի 0.20484 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության հողամասը մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու մասին
10) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Դսեղ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-035-0196-0014 ծածկագրի 0.10653 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասը մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու մասին
11) Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին
12) Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին
13) Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզի 19-րդ, 20-րդ, 21-րդ, 19-րդ փողոցի 1-ին նրբանցքի, 19-րդ փողոցի 1-ին նրբանցքի 1-ին փակուղի և 21-րդ փողոցի 1-ին փակուղի փողոցների թվային անվանակոչման մասին
14) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին
15) Թումանյան համայնքի Շամուտ գյուղի 06-085-0187-0003 ծածկագրի 0.19546 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին
16) Թումանյան համայնքի Շամուտ գյուղի 06-085-0187-0004 ծածկագրի 0.1868 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին
17) Թումանյան համայնքի 2023թ. դեկտեմբերի 22-ի «Թումանյան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին»N 101-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
18) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը որոշելու մասին

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 100-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ՀԵԿ. ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքի 8-

րդ հոդվածի 3-րդ մասի, 11-րդ հոդվածի 1-ին մասի, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածների և <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> օրենքի 5-րդ, 14-րդ հոդվածների պահանջներով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի վարչական տարածքում 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1 և 2-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 101-Ն/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով՝
Թումանյան համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1.Թումանյան համայնքի ղեկավարի վարձատրության չափը հաստատել 421 000 (չորս հարյուր քսանմեկ հազար) ՀՀ դրամ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 102-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետերով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝
Թումանյան համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 21-ի << ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին >> թիվ 58– Ա որոշումը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 103-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Թումանյանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2.Ուժը կորցրած ճանաչել՝ Թումանյան համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 26-ի <<<<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 22-ի << ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 89-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին >>>> թիվ 72-Ա որոշումը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 104-Ա/

Լսեցին
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ /Զեկ. ԱՐՄԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Թումանյան համայնքի սեփականության 2024 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ կցվում է.
1) Գույք՝ 1 308 001 257,09 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով,որից՝
ա) հիմնական միջոցներ՝1 304 329 664,34 ՀՀ դրամ,
բ) այլ շինություններ՝ 7655,43 քմ,
գ) պաշարներ՝ 3 671 592,75 ՀՀ դրամ:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 105-Ա/

Լսեցին
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԻՆՋ ԳՅՈՒՂԻ 06-110-0001-0001 ԾԱԾԿԱԳՐԻ 0.22252 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /Զեկ. ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13 կետի գ/ ենթակետով և V-րդ բաժնի պահանջներով ՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի N 12112024-06-0039 վկայական/ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող 06-110-0001-0001 ծածկագրում գտնվող 0,22252 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գինը սահմանել՝ 595000 (հինգ հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ:
2. Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%–ի չափով:
3. Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 106-Ա/

Լսեցին
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԻՆՋ ԳՅՈՒՂԻ 06-110-0001-0002 ԾԱԾԿԱԳՐԻ 0.26644 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13 կետի գ/ ենթակետով և V-րդ բաժնի պահանջներով ՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի N 12112024-06-0047 վկայական/ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող 06-110-0001-0002 ծածկագրում գտնվող 0,26644 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գինը սահմանել՝ 695000 (վեց հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ:
2. Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%–ի չափով:
3. Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 107-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԴՍԵՂ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-035-0907-0003 ԾԱԾԿԱԳՐԻ 0.20484 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ

ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ /ՁԵԿ. ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, <<Նորմատիվիրավականակտերիմասին >> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով,Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման
8-րդ հոդվածով, հիմք ընդունելով սեփականության իրավունքի N 14112024-06-0002 վկայականը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Դսեղ գյուղի կադաստրային քարտեզի 06-035-0907-0003 ծածկագրի 0.20484 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության հողամասը մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն:
2.Հաստատել վարձակալության տարեկան մեկնարկային վճարը՝ 12000 (տասներկու հազար) ՀՀ դրամ,նախավճարի չափը մեկնարկային վճարի 5%,քայլի չափը՝ մեկնարկայինվճարի 5%-ի չափով:
3.Գյուղատնտեսական նշանակության հողամասը տրամադրվում է 25 (քսանհինգ) տարի ժամանակով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 108-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԴՍԵՂ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՁԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-035-0196-0014 ԾԱԾԿԱԳՐԻ 0.10653 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ /ՁԵԿ. ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով,Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման
8-րդ հոդվածով, հիմք ընդունելով սեփականության իրավունքի N 08112024-06-0034 վկայականը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Դսեղ գյուղի կադաստրային քարտեզի 06-035-0196-0014 ծածկագրի 0.10653 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասը մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն:
2.Հաստատել վարձակալության տարեկան մեկնարկայինվճարը՝ 8000 (ութ հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային վճարի 5%,քայլի չափը՝ մեկնարկայինվճարի 5%-ի չափով:
3.Գյուղատնտեսական նշանակության հողամասը տրամադրվում է 25 (քսանհինգ) տարի ժամանակով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 109-Ա/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ և 52-րդ հոդվածներով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-18-րդ հոդվածներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29/04/2021թ. թիվ 698-Նորոշումը, որակավորված <<ՏՍ-ՌԻԵԼԹԻ>> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ կապված անճշտությունների ուղղման համար, Թումանյան համայնքի Մարց գյուղի 06-071-0119-0013 կադաստրային ծածկագրի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0.04861 հա մակերեսով հողամասի նկատմամբ, քանի որ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր, սեփականաշնորհված չեն և այն ՀՀ կառավարության 08/04/2004 թվականի N 454-Ն որոշմամբ փոխանցված չէ համայնքին, առաջնորդվելով ՀՀ կառավարության 29/04/2021թ. թիվ 698-Ն որոշման 4-րդ հոդվածի 39 կետի 1-ին ենթակետի պահանջներով, նշված հողամասի նկատմամբ ճանաչել Թումանյան համայնքի սեփականության իրավունքը:
2.Նշված հողամասը ենթակա է գրանցման Թումանյանի համայնքապետարանի անվամբ:
3.Թույլատրել համայնքի ղեկավարին դիմել ՀՀ Կադաստրի կոմիտե նշված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի վկայական ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 110-Ա/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-18-րդ հոդվածներով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ և 52-րդ հոդվածներով,ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով ,ՀՀ քաղաքաշինության մասին օրենքով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29/04/2021թ. թիվ 698-Ն որոշումը և որակավորված << ԿԱՐՏՈԳՐԱՖ>> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ կապված անճշտությունների ուղղման համար, Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի 06-004-0029-0089 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.02915 հա մակերեսով հողամասի նկատմամբ, քանի որգոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր, սեփականաշնորհված չէ և այն ՀՀ կառավարության13/04/2006 թվականի N 719-Ն

որոշմամբ փոխանցված չէ համայնքին, առաջնորդվելով ՀՀ կառավարության 29/04/2021թ. թիվ 698-Ն որոշման 4-րդ հոդվածի 39 կետի 1-ին ենթակետի պահանջներով, նշված հողամասի նկատմամբ ճանաչել Թումանյան համայնքի սեփականության իրավունքը:
2.Նշված հողամասը ենթակա է գրանցման Թումանյանի համայնքապետարանի անվամբ:
3.Թույլատրել համայնքի ղեկավարին՝դիմել ՀՀ ԱԳԿ կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանում, նշված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի վկայական ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 111-Ա/

Լսեցին
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 19-ՐԴ, 20-ՐԴ, 21-ՐԴ, 19-ՐԴ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔԻ,19-ՐԴ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔԻ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ ԵՎ 21-ՐԴ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԹՎԱՅԻՆ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ՄԱՍԻՆ /ՁԵԿ. ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզի 19-րդ, 20-րդ, 21-րդ, 19-րդ փողոցի 1-ին նրբանցքի, 19-րդ փողոցի 1-ին նրբանցքի 1-ին փակուղի և 21-րդ փողոցի 1-ին փակուղի փողոցները անվանակոչել հետևյալ թվային հաջորդականությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 112-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ՁԵԿ. ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով,66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով, 66-րդ հոդվածի 2-րդ կետով,<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով Քարինջ գյուղի գյուղապետարանի և Հարություն Ջիվանի Մկրտումյանի միջև 27.05.2010 թվականին կնքված հողամասի /վարելահող/ 25 տարի ժամկետով վարձակալության պայմանագիրը, դրա հիման վրա տրամադրված հողամասի վարձակալության իրավունքի նոր նմուշի թիվ 20112024-06-0046 վկայականը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, Հարություն Ջիվանի Մկրտումյանին վարձակալության

իրավունքով 25 տարի ժամկետով 0.29974 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողատեսքը օտարելուն:
2. Հաշվի առնելով, որ հողամասը վարձակալության իրավունքով պատկանում է Հարություն Ջիվանի Մկրտումյանին և վարձակալը ունի գնման նախապատվություն՝ 0.29974 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողատեսքը 380000 (երեք հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամով ուղղակի վաճառքով օտարել Հարություն Ջիվանի Մկրտումյանին:
3.Համայնքի ղեկավար Սուրեն Թումանյանին օրենքով սահմանված կարգով Հարություն Ջիվանի Մկրտումյանի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր և համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 113-Ա/
Լսեցին
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՄՈՒՏ ԳՅՈՒՂԻ 06-085-0187-0003 ԾԱԾԿԱԳՐԻ 0.19546 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ՁԵԿ. ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13 կետի գ/ ենթակետով և V-րդ բաժնի պահանջներով ՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի N 21112024-06-0030 վկայական/ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող 06-085-0187-0003 ծածկագրում գտնվող 0,19546 հա մակերեսով արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գինը սահմանել՝ 518000 (հինգ հարյուր տասնութ հազար) ՀՀ դրամ:
2. Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%–ի չափով:
3. Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 114-Ա/
Լսեցին
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՄՈՒՏ ԳՅՈՒՂԻ 06-085-0187-0004 ԾԱԾԿԱԳՐԻ 0.1868 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ***/ՁԵԿ. ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13 կետի գ/ ենթակետով և V-րդ բաժնի պահանջներով ՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի N 21112024-06-0043 վկայական/ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող 06-085-0187-0004 ծածկագրում գտնվող 0,1868 հա մակերեսով արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գինը սահմանել՝ 492000 (չորս հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամ:
2. Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%–ի չափով:
3. Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 115-Ա/

Լսեցին
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի <<ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 101-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ/

Ղեկավարվելով <<ՀՀ բյուջետային համակարգի մասին >> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Թումանյան համայնքի 2023թ. դեկտեմբերի 22-ի «Թումանյան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 101-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 116-Ա/
Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի նիստի օրը որոշել 2024 թվականի դեկտեմբերի 20-ը, ժամը 11:00:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 117-Ա/

Թումանյան համայնքի ավագանու անդամներ՝

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԲԵԳԼԱՐՅԱՆ ՀՈՎՆԱՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՆԻԿԱԼ

ԵԳԱՆՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԽԱՉԻԿՅԱՆ ԳՈՀԱՐԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ԿԱՐՈ

ՄԱՐՈՒՔՅԱՆ ՋՈՆԻԿ

ՇԱՔԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՎԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ

ՎԱՆՅԱՆ ՀՐԱՆՈՒՇ

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ